



եալին մահուան պանծալի յիշա-  
տակը և իրենց ներկայութեամբ  
փառաւորել զայն :

Երբ մարմինը հողին յանձնը-  
ւեցաւ, տակաւին ժողովուրդը չը  
հեռացած՝ պ. Սագունու սիրե-  
լի ընկերներէն ոմանք մէյմէկ  
հակիրճ բանախօսութիւններ ը-  
րին, քորքան որ իրենց խոցուած  
ու այրած սրտերը թոյլ կուտա-  
յին իրենց : Պ. Հրահատ, որուն  
ձայնին և շեշտերուն տխուր ել-  
ևէջները կարտայայտէին իր ըզ-  
գացած անպատում ցաւը, հազիւ  
քանի՜ մը բառեր կրցաւ թոթո-  
վել, ու վերջացուց ըսելով՝ ոմն  
ուս. Սագունին, և արդէն իր սառն  
մարմինը ցուրտ հողին յանձնած  
ենք, սակայն նա ապրեցաւ ու  
մեռաւ գաղափարի՜ մը համար  
միայն, քոր ժողովուրդին բարեւո-  
ւութեան համար. և քանի մենք  
ողջ ենք, քանի հայ ժողովուրդը  
ստրկութեան ծանրակուռ շղթա-  
ներուն ներքե կը հեծէ, Սագու-  
նին անմահ պիտի մնայ միշտ մեր  
ամենուն սրտին մէջ, հոգ չէ թէ  
իրեն նման ուրիշ զոհեր ալ տանք,  
և իր հետևորդները յառաջ պիտի  
տանին իր ու իր նախորդներուն  
գործը... Ուրեմն, հանգիստ ու  
կերպող, ո՞վ պաշտելի ընկեր... ու  
իւր խղճուկ ձայնը հազիւ կրցաւ  
վերջին բառերը արտաբերել, և  
այնուհետև, միևնոյն ազդեցու-  
թեան ներքե խօսեցաւ պ. Վարդ  
Աղասեան. ոչինչ հարիւր երկար  
տարիներ, սկսաւ ան, արիւնա-  
խղճ վամպիրը, — Կլատտունի  
նշաւակած Մեծ Մարդասպան Սուլ-  
թան Համիտը, — և իր նախնիք-  
ները հայութիւնը իրենց բռնա-  
կալ ճիրաններուն տակ առած՝  
ճնշեցին ու հալածեցին զայն,  
մինչև որ ան՝ իր ինքնագիտակ-  
ցութեան շրջանին հասնելով, ու-  
զեց թօթափել այդ լուծը և մարդ-  
կային ազատ ու անկախ վիճակի  
մը համար մաքառիլ : Ու այս

մեծ հասարակական կռուին հա-  
մար ելան շատ մեծ քաջամար-  
տիկ զինուորներ, առաքեալներ,  
որոնցմէ մէկն էր և Սագունին :  
Եւ ապա այնտեղ ցոյց տուաւ,  
որքան որ ներելի էր, պ. Սա-  
գունու սուկուն ու յարատե գոր-  
ծունէութիւնը, անոր անխնայ ու  
աննկարագրելի եռանդը հանդէպ  
Կուսակցութեան օգտին, և փա-  
կեց իր բանախօսութիւնը խորին  
չնորհակալութիւն յայտնելով  
Անդ. հասարակութեան Խօսեցան  
և արտասանութիւններ ըրին ու-  
րիշ մէկ քանիներ ալ, որոնց  
վրայ առանց ծանրանալու, կը  
փակեմ սոյն սգակիր թղթակցու-  
թիւնը, որ անտարակոյս շատե-  
րու աչքերէն արցունքի աղի կա-  
թիւններ պիտի խլէ լսելով պ.  
Սագունու նման անձնուէր ու կա-  
մաւոր զինուորի մը կորուստը,  
որ վերջին մէկ երկու տարիներ,  
Հնչակեան Կուսակցութիւնը ամ-  
բապինդ հիմերու վրայ կառու-  
ցանով է՛ն անառիկ ու անընկ-  
ճելի պատնէշը հանդիսացած էր  
հակառակորդ կուսակցական դա-  
ւադիրներու ոճրագործ խմբակին  
բոլոր ինթրիկներուն և ազգա-  
կործան ձեռնարկներուն հանդէպ :  
Խաղաղ թո՞ղ հանդիս իր ըն-  
կերասպան գեղակներով ծակոտ-  
ւած մարմինը, — Հնչ. Կուս. այդ  
սրբազան նշխարհը, — աւա՞ղ որ,  
Մայրենի խախտահան հեռու, օտար  
երկնքի նսեմ ամպերուն ներքե,  
թէպէտե... միշտ հայ սրտերուն  
մօտ ու անմոռաց... :

Մ. Հայկունի  
Հոկտ. 19/1 Նոյ. 1908  
Լոստոն

**ՓՈՐՐ ԻՆՉ ՏԱԿՏԻԱ**  
— 0 —  
Ինչ ևս եկեղեցապատկան կալ-  
ւածները յափշտակելու առթիւ և

ոչ մի հայկական շարժում և ընդ-  
գիմադրութիւն տեղի չէր ունե-  
ցել Կովկասում, երբ մեր նա-  
խորդ յօգւածները մէկուսում ասա-  
յինք թէ՛ հեարէն տիրողը ցա-  
կը տայա, թէ՛ Կովկասի հայերը,  
որչափ էլ իրենց սրտին մօտիկ  
զբան Տաճկաստանի ազատութեան  
զորքը, այդ առումնայնիւ նրանք  
երբէք այնպիսի սրտով ու ինք-  
նազուհու թեմամբ չեն մասնակցի յե-  
զափոխական գործին, ինչպէս որ  
կը մասնակցեն երբ խնդիրը ի-  
րենց սեպհական կաշին կը վե-  
րաբերի : Եւ գեւ. նոր էր այդ  
մեր յօգւածը խմբագրութեանդ  
հասել, երբ յանկարծ, կարծէք  
մի մագիքական փայտի զօրու-  
թեամբ, ամբողջ Կովկասի հայու-  
թիւնը ալեկոճեց ու յեղափոխա-  
կան տրամադրութեան մէջ ընկաւ :  
Երևան, Վաղարշապատ, Ալեք-  
սանդրապոլ, Ղարս, Գանձակ,  
Թիֆլիզ, Բաքու միմիայն յե-  
տեկից գլուխ բարձրացրին և հա-  
կակառավարական ամենափառա-  
ւոր ցոյցեր արեցին : Եւ ամենից  
բնորոշ ու մեր արած, ըստ տը-  
գէտներէ, մաքագրէութիւնը հաս-  
տատու կողմերը այդ շարժումնե-  
րի մէջ այն էին, որ հակացա-  
րական ցոյցերը սկսեցին հէնց  
այն տեղերից, որտեղ ամենից  
քիչ էր սպասուում յեղափոխական  
տրամադրութիւն և այդ ցոյցերի  
գլուխն էին անցել այնպիսի  
անձնաւորութիւններ, որոնք ամ-  
բողջ հայկական կոտորածներ ըր-  
մանակ մի մի եզրպատկան սփինքս  
էին ներկայացնում իրենցից :  
Տաճկահայաստանի յեղափոխա-  
կան շարժումների ամբողջ 10-15  
տարւայ ընթացքում հայկզերից,  
նամանուանդ Կովկասի կղերից,  
քանի՞ հոգի յօժարակամ իրենց  
կուրծքը դէմ դրեցին թշնամու  
գեղակներին, քանի՞ սը բանտ մը-  
տան կամ քարոք գնացին : Ի հար-  
կէ, Կովկասից և ոչ մէկը, Իսկ հի-

մա՞յ... Հիմայ բուրձին ու-  
րիշ բան է. սփինքսը շարժեց,  
սփինքսը գնդակ էլ խփեց ու ստա-  
ցաւ, բանա էլ մտաւ և արտա էլ  
է գնում անտրտուն : Նոյնը կա-  
րելի է տակ և ամեն պարագայում  
կղերին պաշտպանող նոր-Վարա-  
կանների մասին, որոնց կարծէք  
թէ հարեմեքիս լինէր և մի մի ա-  
ռիւծ կտրած ցուցաբաններին  
առաջն էին ընկել «Մեր հայրե-  
նիք» երգելով :  
Ուրիշ կերպ էք, մեր կարծի-  
քով, չէք կարող լինել, չէ՞ որ  
հեարէն տիրողը ցաւ կը տայա,  
Իսկ եկեղեցապատկան կարածնե-  
րը յափշտակելուց աւելի ի՞նչ  
վէ՛ք կարող էր ունենալ կղերը  
ու նրան պաշտպանող կուսակցու-  
թիւնը :  
Կղերականներ ի ու նոր-Վա-  
րականների վրայ շեշտելով, ի-  
հարկէ, մենք չենք ուզում ասել  
թէ հակացարական շարժումներին  
միմիայն գրանք էին մասնակ-  
ցում : Բոլորովին ոչ. ալեկոճեց  
ու իրաբանցումի մէջ ընկաւ  
Կովկասի ամբողջ հայութիւնը,  
նոյնիսկ միմիայն բուրձին բող-  
ջնող բուրձուան (գուցէ հէնց  
նրա համար, որ խնդիրը փողի  
մասին էր) :  
Եկեղեցապատկան կալւածներ  
յոփշտակութեան հարածը այն-  
չափ մօտ էր Կովկասի հայերի  
անձնական կաշին, որ նոյնիսկ  
Դաշնակցականներն էլ չը դիմա-  
ցան... Այն Դաշնակցականները,  
որ ընդամենը մի-երկու ամիս ա-  
ռաջ բանտ օրական ընդհանուր  
գործադուլի ժամանակ իրենց կաշ-  
ւեղդուրս էին գալիս, որպէսզի հայ  
բանտներին յետ կանգնեցնեն  
ա. դ. ընդհանուր հակակառավար-  
չական շարժումից, տակով թէ՛  
մենք չը պիտի ջլատենք մեր յե-  
զափոխական ոյժերը և այլն և այլն  
շատ ցանցառաքանութիւններ,  
այսօր բարբոթին մոռանալով ի-

**Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն 19**

**ԱՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆԸ**  
**ՊՓԵՆՑՑՓ-ի**  
քարգլանեց Շրանստեկէ  
Ա. Տ-եան

**ՀԱՄԱՅՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Communisme)**

Միայն անհատական ետաքրու-  
թիւնը չէ որ նախ և առաջ պէտք է  
լինի, այլ նաեւ ընտանեկան ետա-  
քրութիւնը և միևնոյն երկրի  
բնակիչներուն մէջ սարսուռած ետա-  
քրութիւնը, այն է՝ հայրենասիրու-  
թիւնը : Մարդկային այն բարոյակա-  
նը, որ առանց բացառութեան, բոլոր  
մարդիկը կը նշանէ իրբեւ եղբայրներ  
և բարեկամներ, պէտք է աւելի զօ-  
րաւոր ըլլայ, քան թէ արեւմտեցա-  
կան, բարեկամական, բնակութեան,  
ցեղային և սեռային կրպակը : Հա-  
մայնակալութիւնը յաղթող հանդի-  
սանալու հաւանականութիւնը ներկա-  
յացանել առաջ, պէտք է որ անհատա-  
կան շահէն աւելի զօրեղ զգացում մը  
ոգեկորէ մեզ :

Համայնականութիւնը առ այժմ  
հաւանական կը նկատուի միայն վան-  
քերու մէջ, ուր մեկուսացման զօրա-  
ւոր հակում մը և երկրային վա-  
յելքերէ զլուսանք մը կը հաւաքեն շատ  
կենդանի մեռածներ, — ինչպէս նաեւ  
կարգ մը խտրակեաց կրօնական տղան-  
գաւորներու քով : Քայց նոյն իսկ հոգ  
իշխանութիւնը հարկաւոր է :  
Ոչ կրօնական համայնականութեան  
փորձերը, որ կատարուեցան Հիւսիս-  
սային Ամերիկայի մէջ Ռ. Օվէնի տը-  
նօրէնութեան տակ, անյաջող անցան,  
ինչպէս նաեւ Ֆուրիէի սիստէմին վը-  
րայեղած կէս կրօնական փորձերը : Կրօ-  
նական ընկերակցութիւնները միայն  
գիմարտ շնորհիւ երկաթեայ կարգա-  
պահութեան, իրենց անդամներու խիստ  
ընտրութեան և լաւ ղեկավարու-  
թեան : Բայց այս յաջողութիւնը միզ  
կը թուի շատ սուղ վճարուած ըլլալ  
կրօնական մոլեռանդութեամբ և ան-  
հատական ազատութեան կատարեալ  
զոհողութեամբ : Թէ և այս օրինակնե-  
րը, փոքրիկ աստիճանի մը վրայ առ-  
նուած, երբէք զօրաւոր փաստ մը չեն  
ընկերական համայնականութեան կա-  
րելիութիւնը ազատացանելու, բայց  
ստուրք կուզացուցանեն այն որ նոյն

իսկ մեր մէջէն լաւագոյնները չունին  
բաւականաչափ անձնորոշութեան ոգի  
համայնականութիւնը կարելի ընկաւ  
համար :  
Միւս կողմէ, այն որ ուրիշ տեղ  
յաջողեցաւ շնորհիւ մոլեռանդու-  
թեան և անհատական ազատութեան  
զոհողութեան, մեզի ընդունել պի-  
տի տրուի Պետութեան բռնակալու-  
թեամբ, որ աչ միայն միակ սեփական-  
նաւէրը, իշխողը և տէրը պիտի ըլ-  
լայ արդիւնաբերութեան բոլոր մի-  
ջոցներուն, այլ նաեւ մեզ պիտի հը-  
պատակեցնէ իրեն տրամաբաշխական  
արգարութեան, սխալներու ենթակայ  
կանոնադրութեան մը, որ լայնօրէն  
պիտի բաղադր կամայականութեան գա-  
նելը : Ասոր համար մեր ազատութիւ-  
նը մեզի շատ սիրելի է :  
Աւելի լայն ստանդարտի մը վրայ  
գործադրուած համայնականութիւնը  
կարելի է զօրաւոր իշխանութեամբ մը,  
որ մեզի պիտի ըսէ մեր ընկերք գործը,  
մեր ունենալիք վայելչեցրէ և պիտի  
որոշէ մեր սպասելիքը :  
Յիշուի, կան շատ մարդիկ որ,  
հետո ամէն անձնական շահէրէ, պի-  
տի կատարեն իրենց պարտականու-  
թիւնը առանց ունի արձատրութիւն

պատանջելու : Նոյն իսկ հիմայ գիտու-  
նը կը մտառցանէ իր մտածումներն  
ու երկերը, առաջնորդը իր հանդի-  
սուն ու հաճոյքները. և յաճախ իր  
հացը ուրիշներու փրկութեան համար  
Հիւսիսայապահ իր կեանքի ամենալա-  
տաբերները կանցունէ հիւսիսայան  
մէջ վէրքեր կարտանելով և հիւսիս-  
այնք խնամելով : Բայց անձնուր-  
թեան և զոհողութեան այս զգացումը  
հետո է ընդհանուր ըլլալէ : Երբ բոլորին  
մէջ քանիները ոգեւորող սէքը պիտի  
թագաւորէ ամէն տեղ, այն տեղն իսկ և  
խղի իր պարտաւոր պիտի անհետանայ  
և իւրաքանչիւրը պիտի կըրտայ ըստ  
հաճոյ վայելել ինչ որ կը պատկանի  
ամենուն : Այն որ կը տքրակուսի  
համայնականութեան ներկային մէջ  
անքոթածքեր ըլլալուն վրայ և կե-  
րեւակից մարդիկը աւելի լաւ, քան  
ինչ որ են, թող փորձ մը ընէ, և  
մեր մէջէն ունենէն համակրելիները  
և ազնիւները կարծես ընկերակցու-  
թիւն մը՝ հիմնուած համայնականու-  
թեան սկզբունքներու վրայ : Եթէ  
յաջողին, փրկուէն օրինակ մը առած  
պիտի ըլլան :

(Շարունակելի)

ընդ երեկոյ առաջը այլևս չեն  
 գլանում այդ նոյն յիշ. սյուները  
 շրտելու : Մի՞թէ միշտ էլ կը  
 ցապատկան կարածները յափըշ-  
 տակելու նման անոցը հարած-  
 ներ պիտի լինեն . որ պէս պր.  
 Գաշնակցականները խելքի պատու  
 հասկանան իսկական յիշատիսա-  
 կանի կոչումն ու պարտականու-  
 թիւնը : Եթէ այդպէս լինի, հա-  
 յութեան համար շատ թանգ կը  
 նստի Գաշնակցականների խելքի  
 գայը :

Ռուս միապետութեան ակն-  
 յայտնի աւազակութեան միտմա-  
 րական հետեանքը գտնէ այն ե-  
 դաւ, որ կողմակի հայերի ակն-  
 նախարար ու հաւատարիմ խա-  
 ւերանգամ համոզելիքն, որ թաւս  
 միապետութեան հոգանու տակ  
 ապրելը նոյնչափ կարտաբեր է  
 հայութեան համար, որչափ և  
 թիւրքիւնացում ապրելը : Ծանօնակ  
 սարկների պրոպագանդան գուցե  
 չը կարողանար այսպիսի յեղա-  
 փոխական տրամադրութիւնն ըս-  
 տելով մեր կողմնի հայերի մէջ,  
 ինչպիսին ստեղծեց մօն-Պելզէի  
 անտակա ու անհետաւտեա քաղա-  
 քականութիւնը : Այժմ հայ յե-  
 ղափսականները տակափկայից է  
 կախած արդիւնաւետ կերպով  
 օգտուել այս ստեղծած տրամա-  
 դրութիւնից : Ինչպէս նշանները  
 ցոյց են տալիս, մեր նայիօհա-  
 լիստ յեղափոխականները, ՅԾ-ա-  
 կան թաւախանների շէնքերի օգի-  
 նակին հետեւելով, սմեն կերպ  
 աշխատում են այս հայկա՛յան  
 շարժումներին ընդհանուր հակա-  
 ուսական բնաստեղծութիւն պար-  
 որը կարող է չափազանց կարր-  
 ստարեր հետեւողները ունենալ մեղ  
 համար : Պելզէ-Գալիցիանան կա-  
 ուավորութիւնն էլ արդէն այն  
 է ուղում, որ առիթ ունենայ,  
 առանց կարմրելու, կողկատում

էլ հայկական կոտորածներ առաջ  
 բերել : Եւ որպէսզի այդ առիթը  
 նրանց չտրի, հակական շար-  
 ժումները երբէք չը պէտք է լա-  
 ժանել ամբողջ Ռուսաստանում  
 տեղի անցող ընդհանուր հակա-  
 կառավարչական շարժումներից ու  
 չը պէտք է զուտ հոյակերան բը-  
 նաւորութիւն տալ : Այլ խօսքե-  
 լով ուս կառավարութեան գէ-  
 պի հայերը լուծած վարչապ ըն-  
 թացքը երբէք չպէտք է վերա-  
 գրել ամբողջ ուսու մարմնի տու-  
 առելութեամբ միտարարելով գէպի  
 այդ ժողովուրդը, որը պակաս չէ  
 տանջում ու հարստահար-  
 ւում նոյն միապետական ընթի-  
 մից և որը արդէն հազարա-  
 կոր զոհերի գնով անընդհատ  
 մաքաւում է նոյն բռնապետա-  
 կան միապետութեան գէպ : Այլ  
 հայ յեղափոխականները պիտի  
 հայկական շարժումները ուղղեն  
 միմիայն ու միմիայն ուսու միա-  
 պետութեան գէպ և այն էլ ոչ թէ  
 անշատ, զուտ հայկական կեղծի  
 տակ, այլ միայնա՛մ Ռուսաստանում  
 ապրող ուսու վրայի, լէ՛հ հայրն  
 բոլոր ազգերի յեղափոխական  
 տարրերի հետ :

Այդ ճանապարհով միայն հայ  
 ժողովուրդը կարող է թէ իբրեւ  
 քաղաքացի ազատեալ բանակ-  
 տական կաշկանդումներից և թէ  
 իր ազգայնական ինքնուրոյնու-  
 թիւնը պաշտպանել :

Գալիցիայի հարցին, թէ ար-  
 գեօք սահմանադրական Ռուսաս-  
 տանը չը պիտի՞ շարունակի իր  
 հայակերական քաղաքականու-  
 թիւնը, ճիշտ այնպէս, ինչպէս  
 որ սահմանադրական Գերմանիան  
 անում է Լեհերի վերաբերմամբ  
 — մենք գրան կը վերադառնանք  
 միւս անգամ :

Թիֆլիս Թորոս

ՄԵՐ ՆՈՐ ԲՅՆԱԿԱԿԱՆՆԵՐ

Անցեալ թիւին վերջապա ընթեր-  
 ցողներու կողմէ ախարժով ու հետաքը-  
 քութեամբ կ'սրը պոռած «Ռուս — Ա-  
 ւրոսթիսիան» արդարականութիւնը  
 Պոլսոյ անտան թեր սկզբին մէջ՝ րանա-  
 սիր սկանը :

Այս համարին ալ կըսելուինք իբր  
 բնաւ իրական հրատարակել մեր սի-  
 բեկի ընկերոջ Ա. Նազարեէի շատոնց  
 ուղարկած պատասխանը : Առաջին  
 անգին փոխադր. քարտի ղեմ. որ  
 Վ. սոստի կեղծոտ փարսեր իր էջերուն  
 մէջ՝ իբր ստեղծ էր :

Անա՛, այժմէն իսկ ուշագրաւ թի-  
 կը կը հրա իրենք հասարակութեան  
 այն միտման մասին, որ անգիր սկզբ-  
 րէն թիւր ու սխալ կարծիքներով արա-  
 մադրուած Յեղափոխական Գործին է՛ն  
 նշանաւոր գէպերէն մէկուն «ի խոսչ  
 հան գրա» կը պատւ.՝ կարգ մը հասա-  
 րակական ցեղերէ ինքուրտեղով :

Սոյն բանասիրտիւնի ուշի ուշով  
 ընթերցողը բաւական պիտի ըլլայ  
 միանգամընդմիջա զբերու այն շինու-  
 ու անոց զրպարտութիւնները, արնոք  
 ոչ մէկ աստիւղ իման նազարեէի բար-  
 ձըր ու գնահատելի արժանիքը նոյն  
 իսկ փոքր չափով մը նսեմացնել :

ՏԻՎԱԿԱՆՆԵՐ ԲԱՆԱԿԱԿԱՆՆԵՐ

II  
 (շարունակութիւն)

Բայց վարդօնի գլուխը հարուստ է  
 յիմարութիւններ արտադրելու մէջ :  
 Ան շարք մը յորւածներ զրեց. — Հրե-  
 աները (?) և մերք (?) : Ահա և  
 Ռուսները (?) : — որոնք կապացուցա-  
 նեն իրենց հեղինակին մանրագու-  
 ժուագական գլխիկ մը ըլլալը :

Տեսէք սաֆայն ի՛նչ յիմար ու  
 մանրագուժուագական հարցատու-  
 թիւն : Չենք զիտեր թէ հայ ժող-  
 վուրդի ո՞ր դասակարգի կամ ո՞ր քա-  
 թէկօրիկ «Ռուսներուն» ո՞ր խառն կամ  
 անոնց ո՞ր իտեղօղիքակախ արտայայ-  
 տութեան մասին է խօսքը : Արդեօք  
 պէ՛տք ունի խօսի այն «Ռուսներու»  
 մասին, որոնց բարբարոս կառավա-

\*) «Շարժում» թիւ 542  
 \*\*) «Մարտում» թիւ 544—545 :

րութիւնը այսօր ստեղծ քաղաքա-  
 կրթութեամբ աշխարհի աչքին առջև կը  
 խեղդէ իբ. ճանկիբունե մէջ : Յիշուան  
 տիայի աղատութեան վերջին անակոյ  
 ճիւղացողները ևս կամ այն «Ռուսնե-  
 րու» մասին, որոնք 1889 թին, Բե-  
 թկապաւ լիքի մէջ հրատարակեցին  
 Ա. Բեյրութաբա. Ժեյրապօֆի, Քիւրաշի  
 թիւարթի և Միտայրօֆի ուսու յեղափո-  
 խականները : Այդպիսի խօսքը այն  
 «Ռուսներու» մասին է, որոնք արտո-  
 ըն մէջ մեռնելու ստեղծելիքի մէջ էին :  
 Օկարեէի, Հեթոցեցի, Պետր. Պողոտան  
 բերելէ մէջ՝ բանասիրեցին Ձե՛րսիցէ-  
 վաքին և խեղդածան ըրին ու դեռ կը  
 նկն իրենց դաւակները, բան սրտերը  
 և սաւանդները Սիպրիոյ և Եջիւէջ-  
 պուրթի բանակներուն մէջ : Եւ կրտսե-  
 նանց՝ որ հազարներով կը մեռնին  
 Յարկովի գէպ մզուած պայտրին մէջ,  
 կը մորթուին Մոսկովայի, Բէթկա-  
 պուրթի, Թիֆլիսի, Քիւրաշի, Կարթլի  
 և ուրիշ քաղաքներու մէջ՝ քաղա-  
 քական ցոյցերու և զարծագոր լինելու  
 մասնակցած ըլլալուն համար :

Ինչպէս կը տեսնուի «Ռուսներ»  
 կը սարու նախնի թէ ուսու դասիներ,  
 թէ ուս քաղաքայիններ, թէ ուս  
 ստիկանութիւնը, թէ ուս բանուր-  
 ները : Ուրեմն անոնց ո՞ր քաթէկօրիկ  
 մասին է խօսքը :

Այնպէս ալ երբ հայերու մասին  
 կը խօսիք, անոնց ո՞ր մասը աչքի ա-  
 ռաջ ունիք : Հայ պուրժուագական թէ  
 մանր պուրժուագին և կամ բանուր-  
 ները, Հնչակեան հայերը թէ Իրօ-  
 շակեան հայերը, սողալայիս հայերը  
 թէ «սլ իսկական» սղալայիս հայերը,  
 Ո՞ր հայերու և ո՞ր սոսնիքու մէջ  
 բաղդատութիւն կընէք :

Ի դուր պիտի փնտռէք դուք այս-  
 պիտի պիտական հարցատուութիւն վարդ  
 զօի քրուածներուն մէջ և արդէ  
 կրնաք հետեւ դնել որ այդ մարդը պիտ  
 խալի խելքը ունի միայն :


Նոյնպէս «Հրեաներու» մասին խօ-  
 սած միջոցին չորոշեր թէ խօսքը արդ-  
 եօք Ռոշիլաներու Հիբրեոու և ու-  
 թիշ աշխատանքի մակարոյններու մա-  
 սին է. թէ անոնց՝ որ կը տքնին  
 այսօր ուսական պրոքարաններու և  
 հանքերու մէջ :

Անկարելի է սեւէ լուծում երբ  
 խնդիրը այսպիսի տգէտ կերպով զըր-

ԱԵՏՏՈ ՆԱԶԱՐԵԷ

ՉԱՐԱԽՈՍ ԹԶՈՒԿԸ

(Հ. ԱՌԻՔՍԻԱՆ ԵՒ ՇԷ ՀԱՍՏԷԻՆ)



Հասարակական գործիչը միշտ և  
 ընտ առ երես է կոտորած հասարակու-  
 թեան տուալ : Հասարական թշնամու  
 դէմ կուրծք բաց՝ նա միշտ տուալ է  
 մղում իր սկզբունքի և խղճի գործը  
 դպի լայն հորիզոններ ի տես կոտոր-  
 ւած հրապարակի վրայ՝ նա կնիտակայ  
 է թշնամու հարւածներին, նա կնիտա-  
 կայ է նաեւ ներքին հակասակորդների  
 քարձակումներին : Աշխատասր. մտու-  
 ծող, գործող ու մարտող՝ նա պէտք  
 է պարտատ լինի իր դէմ լաւած  
 դաւերի, հարձանքի, թշնամանքի,  
 նախանձաւների, ծածկամիտների, ինտ-  
 րիզաներ միշտ փնտտում են առիթ  
 պապագողի կերպով հարւածելու նրան  
 կանխից : Եւ գործունէութեան ըն-  
 թացքում նա խղճի հանդիսուր և  
 նրա սրտի պիտանքն է այն ծառու-  
 յութիւնը, որ նա ձգտում է մատու-  
 ցանել ընդհանուրին, ժողովրդին և  
 նրա ճակատի միակ գարբն է՝ իր միտ-  
 քը և փշէ պտակը :

Մեղանու. մինչեւ այսօր ո՛չ մի

ճշմարիտ հասարակական գործիչ չէ  
 խուսափել այդ բախտից : Իրա պատ-  
 ճաւենքն են՝ ապիտուութիւն, շարակը-  
 տութիւն և ապերիտութիւն — նը-  
 ւերաբերած նրան խառաքի վառակ-  
 ների և Յուդայների կողմէ : Միշտ,  
 առաջ, կան անձեր՝ հոգով ու մտքով  
 ախտաւոր, որոնք իրանց տեսնելով  
 անկարող հասնելու հասարակական  
 գործիչի խաբձութեան, ճիգ են թա-  
 փում այդ գործիչին զրոյել այն ցե-  
 խի մէջ, ու իսրած են նայն իրանք :  
 Այդպիսի ախտաւոր մէկ անձ է  
 Հ. Արաքեւեան անուրով մի հայ, որ  
 «Իր պարտականութիւնն է» համարել  
 մեր դէմ հրատարակել մի պատիւիլ — բը-  
 րօշիւր, որը նենպա հոտութեան մի  
 վիժածք է ծայրէ ի ծայր : Չը գի-  
 տենք, թէ սրբան ժամանակից իվեր  
 է (թեքեա «ի սկզբանէ իվեր») :  
 Ինչպէզ մարդը լաւագաբարութեան ար-  
 հետով է զբաղւած : Ուրիշի ասն լա-  
 թիւն ու փալանիքը նա անցնում է  
 իր կատաղութեան փոքրած սապանի  
 տակ : Այդպիսի լաւագաբարութիւնը  
 գոյութեան միակ պայմանն է այն մի  
 կարգի «Նրապարակագրիւնի» հա-  
 մար, որոնց բնական ճանտարձն է  
 արդէն իրանց մատար յատկութիւն-  
 ների համաձայն նիւթեր փնտուել :  
 Բացի այդ Առաքելեանի համար զա-

նաեւ շահաւտ արձեստ կարող է յայտ-  
 նուել. փոքրիկ ծառայութիւն է մի-  
 թէ հարուստ կապիտալիստ աչքին  
 թող փչել և առաջն աղոթական պոչ  
 թափ տալ : Այս փոքրիկն էլ մէկ ար-  
 հետ է, որի համար պէտք է բախտ  
 ունենալ ծնելու Առաքելեանների  
 ատողի տակ : Եւ մենք մաղթում ենք,  
 որ մեր կատաղած դատախազն իր այդ  
 ճարպիկ հիւնեանների հետք արժանա-  
 նայ աղայական սեղանից թափած փըշ-  
 րանքներին : Ախր, ինչպէ՛ս չանել այդ  
 մաղթանքը, քանի որ ողորմելի մար-  
 դը կատարեալապէս անդող է բունում  
 ու գլուխը կորցնում, երբ գաւանդանք-  
 ների մէջ է ընկնում գրտի մասին :  
 Նա իր սպարտականութիւնն է համա-  
 րում իրան կանգնել պահպան գայլ  
 այն կապիտալիստի և առհասարակ  
 ուրիշների փոքրիկ ու կորիկ ոսկէ ոչ-  
 խարների հօտի վրայ : Նրա ձեռքերը  
 քերտում են այդպիսի ծառայական դե-  
 րի հանգքից : Եւ նրա դեռստը ինն  
 արդէն հասնում է գաղաթնակի տին,  
 երբ նրա մտքով է անցնում իր սե-  
 փական հիւանդ ու սոոր պատանցա-  
 կան գիււար, թէ՛ մի՛ գուցէ մէկ ու-  
 թիւնը, այսինքն մենք չար դիտաւո-  
 րութիւն ունեցած լինէինք արիւնաւո-  
 այն հարստի քաղիւն : Անմիջապէս  
 յետոյ, սակայն, ի՛նչ հանցական ժը-

պիտ է փուում նրա այլապէս երեսի  
 վրայ, երբ ուշքի գալով տեսնում է,  
 որ այն հեռւստե կապիտալիստի գրպա-  
 նը, շնորհով Առաքելեանի նման աչ-  
 նիւ բարեկամներ խորհրդին, փակ է  
 մնացել մի յայտնի ժամանակ իրա հա-  
 րագուս դսեր համար : Եւ այդտեղ  
 Առաքելեանի բորքած ուղղը վերջա-  
 պէս խաղաղում է, ասեա այդ ուղե-  
 դում թարախ էր կապում, ոչ ծակե-  
 ցաւ և... թափեց իրա Առաքելեա-  
 նի պատիւիլ — զբքվում... «Փա՛ռք  
 Աստուծոյ, փա՛ռք Աստուծոյ», խաչ  
 անկող մրթմրթում է նա իր քթի  
 սակ՝ հպարտ գիտալցութեամբ, որ իր  
 զայլային պահպանութեամբ մեծ ճա-  
 տայութիւն է մատուցանում... ազգի՛ն :  
 Եւ ի՛նչ սարսիւղա՛յան զնով է նա քա-  
 ջալերում հօր այդ Առաքելեանների  
 նմաններով, թեղաբաւ, խեղաչել ըն-  
 թացքը : «Փա՛ռք Աստուծոյ, փա՛ռք  
 Աստուծոյ»... Բայց մի՛կն էլ հարցնէ  
 թէ՛ «Առաքելեան, ի՛նչ ևս կոտրած զը-  
 դալի (զրպոյ) նման անկող կերպով մէջ  
 ընկել եօր ևս դսեր ընճակեկան գոր-  
 ձերում...» :

(Շարունակելի)

